

## Արձանագրություն

«Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2011թ. դեկտեմբերի 22-ին տեղի ունեցած թիվ 14 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 64-ը (վաթսունչորս):

Նիստը նախագահում էր ռեկտոր Ա. Հ. Միմոնյանը:

Ռեկտոր Ա. Հ. Միմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. 2010-2011 թթ. ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի (2010-2014թթ.) իրականացման մասին: (Ձեկ.՝ ռեկտոր Ա. Հ. Միմոնյան)
2. ԵՊՀ գիտխորհրդի կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: (Ձեկ.՝ իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ս. Ղազինյան)
3. ԵՊՀ ռեկտորատի կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: (Ձեկ.՝ իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ս. Ղազինյան)
4. «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի 2011թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (Բյուջե) կատարողականի (հունվար-նոյեմբեր) մասին: (Ձեկ.՝ գլխ. հաշվապահ Ռ. Գ. Գրիգորյան)
5. «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի 2012թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (Բյուջե) մասին: (Ձեկ.՝ գլխ. հաշվապահ Ռ. Գ. Գրիգորյան)
6. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հաշվետվությունը 2010-2011 ուս. տարվա գործունեության մասին: (Ձեկ.՝ մասնաճյուղի տնօրեն Ս. Ա. Առաքելյան)
7. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 2011-2015 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի մասին: (Ձեկ.՝ մասնաճյուղի տնօրեն Ս. Ա. Առաքելյան)
8. Ընթացիկ հարցեր:
  - 8.1. «Կրթությունը և գիտությունը Արցախում» և «Բնագետ» գիտամեթոդական հանդեսները ԲՈՀ-ի ցուցակում ընդգրկելու միջնորդությամբ ՀՀ ԲՈՀ-ին դիմելու մասին:
  - 8.2. Ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի «Лингвистические исследования» և ռուս գրականության ամբիոնի «Декабрьские литературные чтения» գիտական հոդվածների պարբերական ժողովածուները ԲՈՀ-ի ցուցակում ընդգրկելու միջնորդությամբ ՀՀ ԲՈՀ-ին դիմելու մասին:
  - 8.3. ՀՀ իրավաբանների միության «Պետություն և իրավունք» հանդեսը ԲՈՀ-ի ցուցակում ընդգրկելու միջնորդությամբ ՀՀ ԲՈՀ-ին դիմելու մասին:
  - 8.4. ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի և Հովհ. Թումանյանի թանգարանի

հեքիաթագիտության բաժնի <<Հասկեր>> մանկական գրականության և բանահյուսության տարեգիրքը և <<Ոսկե Դիվան>> հեքիաթագիտական հանդեսը ԲՈՀ-ի ցուցակում ընդգրկելու միջնորդությամբ ՀՀ ԲՈՀ-ին դիմելու մասին:

8.5. ԵՊՀ պրոֆեսորադասախոսական համակազմի և այլ աշխատակիցների աշխատավարձերը բանկային քարտերի միջոցով տրամադրման ծավալները մեծացնելու մասին:

Պատմության ֆակուլտետի դեկան Է. Գ. Մինասյանն օրակարգի համար (ընթացիկ հարցերի թվում) առաջարկեց ավելացնել նաև ԵՊՀ պատմության ֆակուլտետի <<Պատմություն և մշակույթ>> հանդեսը ԲՈՀ-ի ցուցակում ընդգրկելու միջնորդությամբ ԲՈՀ-ին դիմելու հարցը, որն ընդունվեց նիստի մասնակիցների կողմից միաձայն:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1. Գիտխորհրդի անդամները **լսեցին** 2010-2011 թթ. ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի (2010-2014թթ.) իրականացման մասին: (Ձեկ՝ ռեկտոր Ա. Հ. Միմոնյան): Ռազմավարական ծրագրի իրականացման ընթացքում արձանագրված ձեռքբերումների շարքում Ա. Միմոնյանն ընդգծեց ծրագրի նորմատիվային հիմքերի ապահովման հանգամանքը, ասպիրանտուրայում և դասախոսների որակավորման բարձրացման ծրագրերում կրեդիտային համակարգերի ներդրումը, էլեկտրոնային կառավարման, փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային մոդելի հաջող փորձարկման փաստը, դասախոսների տեղակալման, գիտական կոչումների ձեռքբերման հարցում ուսանողական հարցումների հաշվի առնելու հանգամանքը և այլն: Առավել հանգամանալից կանգ առնելով ծրագրի իրականացման ընթացքում ստեղծված դժվարությունների և խնդիրների վրա՝ բանախոսն առանձնացրեց կուրատորների ինստիտուտի կայացման դանդաղ տեմպերը՝ ֆակուլտետների դեկաններին հորդորելով մեծացնել ուշադրությունն այս ոլորտի վրա: Ա. Միմոնյանը դժգոհություն արտահայտեց նաև աշխատաշուկա-շրջանավարտներ կապի զարգացման դանդաղ միտումների առնչությամբ՝ այս իրողության օբյեկտիվ պատճառների շարքում նշելով հայրենի գործարար շրջանակների մակերեսային վերաբերմունքը՝ ի հեճուկս ԵՊՀ-ի կողմից վերջին շրջանում ցուցաբերած համագործակցության բանական առաջարկությունների:

**Արտահայտվեցին.**- պրոռեկտորներ Ա. Կ. Գրիգորյանը, Ռ. Լ. Մարկոսյանը, ուսանողական խորհրդի նախագահ Ց. Ա. Ակոսյանը:

**Որոշեցին.**- ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի (2010-2014թթ.) իրականացման ընթացքի մասին տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

2. **Լսեցին.**- ԵՊՀ գիտխորհրդի կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: (Ձեկ.՝ իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ս. Ղազինյան):

Գ. Ս. Ղազինյանը նշեց, որ ԵՊՀ գիտական խորհրդի և ռեկտորատի կանոնակարգերում կատարված փոփոխությունների անհրաժեշտությունը բխում է ԵՊՀ կառավարման որոշ սկզբունքների փոփոխությունից, որոնք, մասնավորապես, ամրագրվել են ԵՊՀ նոր կանոնադրության մեջ: Գ. Ղազինյանը մատնանշեց տեխնիկական բնույթի երկու շտկում, որոնք տեղ էին գտել ներկայացվող նախագծում՝ գիտխորհրդի անդամներին նախապես ուղարկված նախագծի տեքստի համեմատ:

**Արտահայտվեցին.**- Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դեկան Ա. Ա. Սահակյանը, վերջինս առաջարկեց կանոնակարգի 8-րդ կետում փոխատեղման կարգի առավել հստակ ձևակերպում, ինչն ընդունվեց նիստի մասնակիցների կողմից:

Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը քվեարկության դրեց ԵՊՀ գիտական խորհրդի կանոնակարգի նախագիծը նոր խմբագրությամբ, որն ընդունվեց ձայների 63 կողմ, 1 ձեռնպահ համամասնությամբ:

**Որոշեցին.**- 2.1. Հաստատել Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգը (նոր խմբագրությամբ):

2.2. Ուժը կորցրած ճանաչել 2003թ. նոյեմբերի 20-ին Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատված ԵՊՀ գիտական խորհրդի կանոնակարգը:

2.3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

3. **Լսեցին.** - ԵՊՀ ռեկտորատի կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: (Ձեկ.՝ իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ս. Ղազինյան):

**Արտահայտվեցին.**- ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Մ. Ա. Գրիգորյանը, ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի վարիչ Դ. Մ. Սեդրակյանը, ուսանող Ա. Ն. Սարգսյանը:

Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը քվեարկության դրեց ԵՊՀ ռեկտորատի կանոնակարգի նախագիծը նոր խմբագրությամբ, որն ընդունվեց միաձայն:

**Որոշեցին.**- 3.1. Հաստատել Երևանի պետական համալսարանի ռեկտորատի կանոնակարգը (նոր խմբագրությամբ):

3.2. Ուժը կորցրած ճանաչել 2003թ. նոյեմբերի 20-ին Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատված ԵՊՀ ռեկտորատի կանոնակարգը:

3.3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**4. Լսեցին.** - <<Երևանի պետական համալսարան>> ՊՈԱԿ-ի 2011թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (Բյուջե) կատարողականի (հունվար-նոյեմբեր) մասին: (Զեկ.՝ գլխ. հաշվապահ Ռ. Գ. Գրիգորյան):

**Արտահայտվեցին.**- ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան Վ. Ժ. Դումանյանը, դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի վարիչ Ա. Ա. Ալեքսանյանը, ՈւՆ նախագահ Յ. Ա. Ակոպյանը:

**Որոշեցին.**- Հաստատել <<Երևանի պետական համալսարան>> ՊՈԱԿ-ի 2011թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (Բյուջե) կատարողականն ըստ հունվար-նոյեմբեր ամիսների:

**5. Լսեցին.** - <<Երևանի պետական համալսարան>> ՊՈԱԿ-ի 2012թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (Բյուջե) մասին: (Զեկ.՝ գլխ. հաշվապահ Ռ. Գ. Գրիգորյան):

Ռ. Գրիգորյանը նշեց բյուջեի եկամուտների և ծախսերի հավասարաչափության հանգամանքը, ինչպես նաև շեշտեց այն միջոցները, որոնք ձեռնարկվել են 2011-12 ուս. տարվա առաջին կուրսեցիների խիստ նվազ թվի պայմաններում առաջնային անհրաժեշտության ծախսերը լիարժեք հոգալու նպատակով:

**Արտահայտվեցին.**- ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան Վ. Ժ. Դումանյանը, ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի վարիչ Դ. Մ. Սեդրակյանը, միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան Գ. Հ. Պետրոսյանը, իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ս. Ղազինյանը, դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի վարիչ Ա. Ա. Ալեքսանյանը:

**Որոշեցին.**- Հաստատել <<Երևանի պետական համալսարան>> ՊՈԱԿ-ի 2012թ. եկամուտների և ծախսերի նախահաշիվը (Բյուջե):

**6. Լսեցին.** - ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հաշվետվությունը 2010-2011 ուս. տարվա գործունեության մասին. (զեկ.՝ մասնաճյուղի տնօրեն Ս. Ա. Առաքելյան):

Մասնաճյուղի տնօրեն Ս. Ա. Առաքելյանը ընթացիկ ուս.տարում մասնաճյուղի գործունեության արդյունավետության բարձրացման հիմքերի շարքում նշեց ուսումնական բաժնի՝ ուսումնական վարչության վերակազմակերպման հանգամանքը: Ուսումնական վարչության կազմում կազմակերպական և որակի ապահովման բաժինների ստեղծումը այս առումով կարևոր նշանակություն ունի: Դասավանդման որակի բարձրացման հիմքերից մեկն էլ Ս. Առաքելյանը համարեց կրթական մոդուլների ցանկը կրթական ծրագրերի նպատակներին համահունչ կազմումը, որն արտացոլում է կրթական այն արդյունքները, որոնք սկսկալվում են ծրագրի ավարտին: Կարևորվեց մասնաճյուղի և Հայաստանում Ֆրանսիայի, Իտալիայի և Մեծ Բրիտանիայի դեսպանությունների հետ համագործակցության

որոշ ուղղությունների վերաբերյալ պայմանավորվածությունների ձեռք բերումը: Ընթացիկ ուս.տարվա ձեռքբերումների շարքում նշվեցին նաև հետևյալները.

- Մասնաճյուղի էլեկտրոնային կայքէջում գետեղվում են ուսանողների առաջադիմությունն արտացոլող թվանշանները,
- Տնտեսագիտության ֆակուլտետում ստեղծվել է օնլայն լսարան, ինչը մեծապես նպաստել է մայրաքաղաքից Իջևան որոշ մասնագետների ժամանման դժվարությունների հաղթահարմանը,
- Ավարտվել են մասնաճյուղի ներքին ցանցի ստեղծման աշխատանքները
- Մասնաճյուղի դասախոսների գիտամեթոդական աշխատանքների թիվը նախորդ ժամանակահատվածի համեմատ զգալիորեն աճել է,
- Տավուշի մարզի բանկային համակարգի աշխատողների 80-90 տոկոսը մասնաճյուղի շրջանավարտներն են, շուրջ 400 շրջանավարտներ դասավանդում են մարզի դպրոցներում, որոնցից շուրջ 300-ը սահմանամերձ համայնքների դպրոցներում:

Մասնաճյուղի առջև ծառայած խնդիրների շարքում Ս. Առաքելյանն առանձնացրեց ինֆորմատիկա և իրավագիտություն մասնագիտությունների բացակայության հանգամանքը, չնայած այդ մասնագիտությունների գծով մարզում առկա զգալի պահանջարկի գոյությանը:

**Արտահայտվեցին.** – Ռեկտոր Ա. Ն. Սիմոնյանը, Հայոց լեզվի ամբիոնի վարիչ Լ. Կ. Եզեկյանը:

Ռեկտոր Ա. Ն. Սիմոնյանը քվեարկության դրեց ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 2010-11 ուս. տարվա գործունեության հաշվետվությունը գնահատելու հարցը: Հաշվետվությունը դրական գնահատվեց միաձայն:

**Որոշեցին.** – Հաստատել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 2010-2011 ուս. տարվա գործունեության հաշվետվությունը:

**7. Լսեցին.** - ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 2011-2015 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի մասին. (զեկ.՝ մասնաճյուղի տնօրեն Ս. Ա. Առաքելյան):

Ռազմավարական ծրագրի հիմնական նպատակ համարվեց որակյալ մասնագետներով Տավուշի, Լոռու և Գեղարքունիքի մարզերի ապահովումը, ինչը հնարավոր է բարձրակարգ կրթության ապահովման և որակի ներքին ապահովման համակարգի ներդրման դեպքում: Ռազմավարական ծրագրի պահանջների հաջող իրականացման դեպքում ակնկալվում է մինչև 2015թ. մասնաճյուղում մասնագիտական դասընթացների դասավանդումը իրականացնել տեղացի դասախոսների միջոցով:

**Արտահայտվեցին.**- ՌԻԽ նախագահ Յ. Ա. Ակոպյանն առաջարկեց մասնաճյուղի ռազմավարական խնդիրների լուծման գործընթացում ներգրավել ԵՊՀ ակտիվ ուսանողներին, ինչն ընդունվեց մասնակիցների կողմից:

Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը քվեարկության դրեց ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 2011-15 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի հաստատման հարցը: Քվեարկությունն անցավ միաձայն:

**Որոշեցին.** – Հաստատել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 2011-15 թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույց-պլանը:

**8. Լսեցին.**– ընթացիկ հարցեր:

**8.1. Լսեցին.**– ԼՂՀ ԿԳ նախարարության <<Կրթությունը և գիտությունը Արցախում>>, <<Բնագետ>> գիտամեթոդական հանդեսները, ԵՊՀ ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի <<Лингвистические исследования>> և ռուս գրականության ամբիոնի “Декабрьские литературные чтения” գիտական հոդվածների պարբերական ժողովածուները, ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի և Հովհ. Թումանյանի թանգարանի հեքիաթագիտության բաժնի <<Հասկեր>> մանկական գրականության և բանահյուսության տարեգիրքը և <<Ոսկե Դիվան>> հեքիաթագիտական հանդեսը, ԵՊՀ պատմության ֆակուլտետի <<Պատմություն և մշակույթ>> հանդեսը **թեկնածուական և դոկտորական** ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների՝ ԲՈՀ-ի ցուցակում ընդգրկելու համար երաշխավորելու հարցը:

**Արտահայտվեցին.** – Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ս. Ղազինյանը, անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Ս. Ք. Գասպարյանը, պատմության ֆակուլտետի դեկան Է. Գ. Մինասյանը, ռուս բանասիրության ֆակուլտետի դեկան Պ. Բ. Բալայանը:

**Որոշեցին.** –

1. Երաշխավորել <<Կրթությունը և գիտությունը Արցախում>>, <<Բնագետ>>, <<Лингвистические исследования>>, “Декабрьские литературные чтения”, <<Հասկեր>>, <<Ոսկե Դիվան>>, <<Պատմություն և մշակույթ>> հրատարակություններն ընդգրկելու **թեկնածուական և դոկտորական** ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում:
2. Դիմել ՀՀ ԲՈՀ-ին՝ վերոնշյալ հրատարակություններն ընդգրկել **թեկնածուական և դոկտորական** ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում:

**8.2. Լսեցին.** – ՀՀ իրավաբանների միության <<Պետություն և իրավունք>> հանդեսը **թեկնածուական** ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների

հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների՝ ԲՈՀ-ի ցուցակում ընդգրկելու համար երաշխավորելու հարցը:

**Արտահայտվեցին.** – Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ս. Ղազինյանը, անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Ս. Ք. Գասպարյանը, պատմության ֆակուլտետի դեկան Է. Գ. Մինասյանը, ռուս բանասիրության ֆակուլտետի դեկան Պ. Բ. Բալայանը:

**Որոշեցին.** –

1. Երաշխավորել <<Պետություն և իրավունք>> հանդեսն ընդգրկելու **թեկնածուական** ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում:

2. Դիմել ՀՀ ԲՈՀ-ին՝ <<Պետություն և իրավունք>> հանդեսն ընդգրկել **թեկնածուական** ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում:

**8.3. Լսեցին.** – ԵՊՀ պրոֆեսորադասախոսական համակազմի և այլ աշխատակիցների աշխատավարձերը բանկային քարտերի միջոցով տրամադրման ծավալները մեծացնելու մասին:

**Արտահայտվեցին.** – Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, պրոռեկտոր Ռ. Լ. Մարկոսյանը, գլխավոր հաշվապահ Ռ. Գ. Գրիգորյանը:

Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը դժգոհություն հայտնեց բանկային քարտերի միջոցով աշխատավարձերի ստացման ներկա ծավալների առնչությամբ՝ նշելով, որ այս հարցում ամենաշատ անելիքներն ունեն ֆակուլտետների դեկանները, կառուցվածքային մյուս ստորաբաժանումների ղեկավարները:

**Որոշեցին.** – հանձնարարել կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝ աշխատանքներ տանել աշխատակիցների աշխատավարձերը բանկային քարտերի միջոցով տրամադրման ծավալները մեծացնելու ուղղությամբ:

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ՝

քարտուղար՝

Ա. Հ. Սիմոնյան

Մ. Ա. Սողոմոնյան

27.12.2011թ.